Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2022 թվականի աշխատանքային ծրագրով 4-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի աշխատանքային ծրագրով 4-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների հաշվարկման մեթոդիկաների և սակագների սահմանման (վերանայման) կարգի լրամշակում,
- Էներգետիկայի բնագավառի պետական մասնակցությամբ ընկերությունների (ՀԱԷԿ, ԵՐՋԷԿ, ԲԷՑ, ԷԷՀՕ, ԷԷՇՕ) համար անհրաժեշտ հասույթի, սակագնի առանձին տարրերի ֆիքսման և դրա տարեկան վերանայման մոտեցումների հաստատում 10-ամյա ժամանակահատվածի համար,
- Սպառողի էներգատեղակայանքներով էլեկտրական էներգիան ենթասպառողների կամ բաշխողի այլ ցանցերի սնման համար փոխանցելու կարգով ամրագրված դրամային մեծությունների վերանայում,
- Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կանոնների համաձայն՝ էլեկտրակայանների պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների հաստատում,
- Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների և ծառայություններ մատուցող ընկերությունների սակագների վերանայում,
- Էլեկտրաէներգիա սպառողների համար գործող գիշերային և ցերեկային սակագների հետագա կիրառության նպատակահարմարության, սպառողների համար ամսական հաստատուն սպասարկման վճարների սահմանման ուսումնասիրություն,

- Էլեկտրաէներգիա սպառողների համար ռեակտիվ էներգիայի սակագների ներդրում,
- Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակում,
- Գազամատակարարման համակարգի սակագների հաշվարկման մեթոդիկայի լրամշակում,
- Խոցելի սպառողների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում, վերջիններիս համար սակագնային քաղաքականության բարելավման նպատակով իրավական ակտերի լրամշակում,
- Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի լրացուցիչ պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով վերջիններիս 2022 թվականի գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգի իրականացում, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը,
- Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների լրամշակում,
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգի իրականացում,
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայում,
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իր սպասարկման տարածքի հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկի համաձայնեցում հանձնաժողովի հետ,
- Դատական գործերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության հրապարակում,

- «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի պահանջներից ելնելով՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2022 թվականի անվանական կազմի և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաստատում,
- Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի փոխկապակցման վճարների սահմանում,
- Հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնների և վարձակալության վճարների լրամշակում,
- Հանձնաժողովի 2023 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատում, որտեղ ըստ ժամանակացույցի կարտացոլվեն հանձնաժողովի գործունեության ծրագրով նախատեսված կոնկրետ աշխատանքները:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման ցանցին և ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման եռամսյակային ցուցանիշները,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: